

891.99

~~U-97~~

Uruptile

Keeps/Keeps/Keeps

1910

891.99

U-97

XVI, u.

XVI

SECRET

PROHIBITION ACT, 1915





## Հ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Ռ Ե Ն Ե Ր Ի Ն .

Չե՛զ, ո՛վ հայրենի միգրացիայ լեռներ,  
 ձե՛զ եմ պիտում ես՝—ձեզնով երգելու ցա-  
 ւասանց հոգուս ե՛ւ վիշտ, ե՛ւ կսկիծ: Չե՛ր  
 կուրծքն էլ պատռուած անհուն ցաւերից. ձե՛ր  
 ճակատն ամպո՛ւս խորունկ քախիծից. ձե՛ր  
 անեղ շնչից բու՛ք ու բորանն է մտնում վայ-  
 րագ: Թե՛եւ մերթկն է փոքորկում հոգիս, վե-  
 րապայց միտս ցաւերով բեռնուած ննչում է  
 սիրսս . . . — վիրաւոր արտի բունալից ձայնից  
 ամենքն եմ խորում. եւ ես՝ մեն-մենակ  
 կանգնած եմ ննչող խաւարի միջին իմ բարդ  
 ցաւերով, խորունկ վերերով՝ նեղո՛ւ ամեն-  
 քից, բայց հոգով մօտիկ ձեզ, իմ հայրենի  
 մեռուցս լեռներ: Չե՛ր ամեն մի խորն, ա-  
 մեն մի բեկոր ունի արիւնոս իւր պատմու-  
 քիւնը . . . Եւ դոժան ձմեռն, երբ բու՛ք-բո-  
 րանը խեղազար շնչում, ձիւն ու աւազը ի-  
 բար է խառնում, ցափ - ցրիւ սայիս,—  
 մեն-մի մտնոց նոր պատմութիւն է անցեա-  
 լից պատմութիւն: Չե՛զ պէս՝ ցաւերով սանջւած  
 իմ հոգին ակամօց է դնում նրանց մեմու-  
 ջին եւ նրանց ցաւով խո՛ր ներշնչում . . .



## Հ Ա Ր Ս Ն Ա Ռ Ե Ր Պ

Հպարտ-հպարտ սև սարերով է շրջապատուած մեր երկիրը: Յազթ կատարները մինչև ամպերը բարձրացրած, իրենց կուրծքը անյազթ քաջի նման ցցած, դէմ են դնում խիստ բնութեան հարուածներին: Յուրտ ձմրան դաժան քամին միշտ ձեան հետ է մենամարտում սարի լանջին և մռնչում. ուժգին խփում, ձիւնի փոշին ցրիւ տալիս, սարի ժէոոս կրծքին ուղղում իւր հարուածը, էլ յետ դառնում, ձէնը կտրած, թագնւում ձորում, նոր ոյժ ստանում, նոր բարկութեամբ հարուած թափում. սարը գոռ է. նրա կուրծքը անյազթելի. նա անսասան դէմ է դնում հարուածներին ու ծիծաղում . . . :

Հեղ արևի մեղմ շողերից ձիւնը հալում, առուններ է գոյացնում. կարկաչելով նրանք հոսում սարի կրծքով,

ձորի միջին պղտոր, յուզուած գետակ, կազմուած... Մթին ամպերը կուտակուած են սարի գլխին, նա մոայլւում, յօնքերը կիտած վէրքոտ կրծքից մըւրնչալով լոյս պահանջուած. նրա ձայնից որոտում է ողջ երկինքը, և երկիրը գլրդում: Վտտկները կայլակներով թափուած են այն գետակը, որ վըշշալով ձորի միջին նրա քարերն է տաշում . . .

Իսկ գարնանը. այն լեռների գորշ լանջերը հազարերանգ ծաղիկներով զերթ նորահարս պճնուած, զուգուած, անուշ բուրմունք տարածելով՝ գարնան գալուստն են աւետում: Չորը կանաչ, խիտ սաղարթով մըթնանում է. նրա միջին հոսող առուն հաղիւ լսուող համեստ ձայնով է խոխոջում, մերթ թափնում խոտերի մէջ, ձայն ծաղուներ իրեն քաշում, մերթ արծաթէ երեսը բանում: Չորը լցուած թռչնիկներով, թռչնիկները խօսք մէկ արած՝ ճուտողում են ու թռչկոտում, մեծ բնութեան վեհ

գաղտնիքը իրենց երգով փառաբանում ու ծըլուըլում: Արծիւը... սէգ թևերը փռած օդի միջին, մեր սարիցն էլ բարձր ճախրում ու հրացայտ աչքերն ուղղում ձորի խորքը.— ձորի ներսում սուր խանչալի շողշողալը և անմեղ գոհի թաւալգլոր ընկած գլուխը նա տեսնում է... նա տեսնում է, նորից ճախրում, սուր պաքներ հուր աչքերիցն արձակում . . .

Այն մեծ սարի սուր կատարին աւերակի բեկորներ կան.— մնացորդ են մի հինաւուրց յիշատակի: Իւր վիթխարի յաղթ գագաթով և ամրոցի բեկորներով կուրծքը ցցած բարձր լեռուը վկայ է մի արնոտ անցքի: Մինաս պապը զիտէ անցքի պատմութիւնը: Նա շատ անգամ է այդ կրկնել, բայց միշտ թարմ է հնչում նրա պատմութիւնը:

— Շատ տարիներ են անցել այն օրից,— այսպէս էր միշտ սկսում,— հըւսէն, հեռուն կապտին տալիս սարի գլխին ցցուած, քանդուած պարսպի

կտորները տեսնում ես.— մնացորդ են մեծ ամբողջի: Տեսնում ես այն հսկայ սարը, որ գլուխը խիտ ամպերի մէջն է թաղել, — ամեն գարնան մալ ու քոչով հովիւ Ասլանը վէր էր գայլիս նրա դռշին: Քաջ էր Ասլանը, լայն թիկունքով, հաստ ու ամուր բազուկներով, բարձրահասակ, սև աչքերով, թաւ յծնքերով. նա նման էր իրեն պատող հսկայ լեռանց. նա իւր ցեղի ամբողջ զարդն էր: Ո՞վ չէր սիրում իգիթ հովուին. նրա սրնգի անուշ ձայնից սար ու ձորեր հրմայւում էին. նրա անուշ մեղեգիները հարս աղջկանցը կաշկանդում, նրանք գաղանի նրա համար էին ապրում. ամենքն իրենց սրտի խորքում ամուր պահում նրա պատկերը: Ասլանը նրանց երազների առարկան էր. ամեն մէկն էլ մտածում էր. վայ թէ Ասլանն ուրիշն առնէր, ուրիշ աղջկայ սիրտը ձօնէր.— ինքը վշտիցը կը մեռնէր. ի՞նչ պէս ապրել աշխարհի մէջ առանց սիրած իգիթ եարի, չէ՞ որ երկիրը կը փշրուէր ու իրեն ողջ-ողջ, զրկուած

եարից, ներս կը տանէր: Հովուի աղջիկն էլ սիրել գիտէ. նրա սէրը վայրենի է. այն սարերի մրբըկի պէս նրա սէրը բռնկւում է ու որսառւմ, ինչպէս փայլակը սարի գլխին: Նրա սիրոյ անեղ ձայնից արար-աշխարհք է դրդում...

Մեր սարերի միւս կողմն էլ դարձեալ սարեր ու ձորեր կան. նոյն կատարներն են երկինք հասած, իրենց փեշերը տարածում են հեռու-հեռու, որտեղ դարձեալ խաշնարածներ մալ են պահում: Այդ բոլորը մի բէկի է: Աստրծոյ աշխարհ, բայց բէկն է տէր: Նա Աստրծուց չէ՞ որ ստացաւ, այլ իւր ուժով, սարուկներով տիրապետեց, հովուներին ծառայ շինեց: Հովուներն էլ խաւար մարդիկ՝ եղան բէկի ստրուկ ծառայ:

Կարիճ Ասլանն, իգիթ Ասլանը սարի միւս կողմը հիւր գնաց ծանօթ հովուին: Այնտեղ տեսաւ հիւր-փէրի, սարի ջէյրան, դաշտի մարալ, չքնաղ, սարի գեղեցկուհի բէկի դուստրը: Տեսաւ, սիրեց: Սիրուն Ծաթմի գոյգ կրակոս,

սև աչքերից մի սուր սլաք թռաւ, ցցուեց քաջ Ասլանի ամուր կրծքում: Մխաց կուրծքը վէրքոտ սրտից արիւն հոսեց: Այդ օրուանից կտրիճ Ասլանն աշուղ Կարձաւ. ամբողջ աշխարհը նրա համար սև մութ պատեց: Այն ծաղկաւէտ կանաչ դաշտերը չէին ծաղկում նրա համար, այն վիթխարի սարի լանջը չէր գրաւում նրա ուշքը: Նա մոռացաւ ուն ու ոչխար, ծաղիկ, աղբիւր և սրինգը նրանց համար. նա նուագում, երգ էր հիւսում վէրքոտ սրտի ետրի համար: Նրա երգից սարերը, ձորերը շարժուեցին, ծաղիկները մեղմ օրօրով իրար տալով նրա մրմունջ մեղեգիները, տարան, հասցրին գեղեցիկուհի, լեռան փէրի, սիրուն Փաթմին՝ խորունկ խոցուած սրտի դարդերը... Յուզուեց չքնաղ Փաթմի սիրտը. ականջ դրաւ խորունկ խոցուած սրտի ձայնին ու նա սիրեց քաջ Ասլանին: Չէ որ սէրը սրտի գործ է. նա բէկզագին չուզեց սիրել և քաջ հովուին ընտրեց իր ետր:

Սոր էր խոցուած Ասլանի սիրտը.

նա միայնակ չը կարեցաւ տանել վշտի ծանրութիւնը: Եկաւ օրան, կանչեց ցեղի հովիւներին:

— Հէյ, եղբայրներ, Մուս սարում ջէյրան տեսայ, հիւրի-փէրի աղջիկ տեսայ: Այն օրուանից սիրտս մաշուում, նրա սիրուց հիւժւում, խոցւում, — գէպ գերեզման է ինձ տանում: Հէյ, եղբայրներ, առանց Փաթմի ես չեմ կարող հանգիստ շրջել: Սար ու ձորերը մթնեցին, այս կանաչն ու ծաղիկները թոշնեցին: Այն մեծ բէկի սիրուն աղջիկն իմն է. ո՞վ է ուզում ընկերանալ ինձ այս գիշեր:

Քաջ հովիւները միաբերան ձայն տուին. իրենց արիւնը խոստացան եղբօր համար չը խնայել: Ասլանը վերցըրաւ տասը կտրիճ, «մնաս բարև» ասաց ցեղին, ճանապարհուեց:

Սոււմբը հասաւ ծանօթ բէկի սարի լանջին, քաջ Ասլանի ծանօթ հովուի գետնափորին: Նա դուրս եկաւ, սարի կրծքին նստեց մենակ և սրինգը կկկացըրեց... Սիրուց տանջուած սրտի ձայ-

Նը բարձր հնչեց անուշ սրնգի փողի միջին, գնաց հեռու, ծաղկապսակ արօտների վրայից անցաւ, Ասլանի ցաւը տարաւ յայտնեց սիրուն Փաթմին: Լսեց Փաթման, զգաց սիրոյ հզօր կոչը և գիշերը՝ մէջ գիշերին ծածուկ փախաւ, վառ սիրոյ գիրկը նետուեցաւ...

Անցան օրեր: Ասլանը հասաւ իւր մուրազին, նրա համար ծաղիկները առաջուանից էլ աւելի անուշ հոտով էին բուրում. ձորի մեղմիւ սօսափիւնը, ջրի կարկաչն ու թռչնիկների ծըլուրըցը մարգարէի դրախտն էին նրան թւում. մօտն էր չքնաղ, սարի ջէյրան, դաշտի մարալ, հիւրի-փէրի, սիրուն Փաթման: Բէկն անիծեց իւր ազ՛ջկան, սիրուն Փաթմին, որ Ասլանին դերադասեց բէկփեսայից:

Այն լեռներին ու ձորերին, ուր Ասլանն էր իւր ցեղի հետ ամեն գարնան իջնում քոչով, այս մեր բէկի պապի պապն էր տիրապետում: Ամեն տարի բերքից յետոյ գալիս, ստանում տասնորդը: Այդ տարին էլ բէկը գալիս,

հիւր է իջնում Ասլանի մօտ. հաւաքում է տասնորդը. բայց տեղիցը չի էլ շարժոււմ.—նա տեսել էր սիրուն Փաթմին ու հմայուել: Իգիթ Ասլանն այդ չը գիտէր. հիւրին քշել իւր տնիցը՝ հակառակ էր սովորութեան: Մէկ օր Ասլանը դաշտում, բէկը սիրտ է առնում, կանչում սիրուն Փաթմին: Նա պատմում է իւր տանջանքը, խոստանում է հարստութիւն, լաւ զգեստներ, եթէ միայն... եթէ միայն նա կրթողնէ քաջ Ասլանին, կրցանկանայ լինել «խանում», ինչպէս առաջ իւր հօր տանը:

—Բէկ, միթէ Ասլանը քեզ անպատուեց. դու նրա հիւրը, այսքան օրեր քեզ կերակրեց, իւր տուն-տեղը քեզ նուիրեց, փոխարէնը՝ այդպէս կ'ուզես ցոյց տալ նրան հիւրի պարտքը: Ես թողեցի բէկի օճախ, հարուստ ծնողք. ես չուզեցօյ ընտրել փեսայ քեզ պէս բէկի, այժմ կ'ուզես՝ ջահէլ—ջիւան, սարի իգիթ, քաջ Ասլանին թողնեմ մենակ, քեզ հետ փախչեմ: Ամօթ է քեզ. շուտով անցիր, գնա՛ տունդ, թէ որ կարիճ

Ասլանը լսեց՝ խէր չես տեսնիլ նրա ձեռքից:

Բէկը փոշման՝ վերցրաւ աւարը և մարդկանց հետ ճանապարհուեց: Բայց Ֆաթմի կրակը նրան այրել չըզտարեց:

— Ո՞ր մի չորան այդպէս հիւրի խա- նուժ ունի, ինչպէս Ասլանը, ո՞ր «ու- յաթ» կրկարենայ ծոլտուն հանել բէկի առաջ: Ինչի՞ բէկ եմ, որ Ասլանի պէս չորանի չքնազ կնոջ չըտիրանամ: Հէյ, ծառաներ, գնացէք, ասէք կտրիճներին՝ գէնք-զրահով պատրաստ լինին:

Բէկը վերցրաւ շատ կտրիճներ, գէնք զրահով, սուր-թուանքով ուղիղ դիմեց սարի լանջին բանակ դրած քաջ Ասլանի օբաներին: Արևծագին բէկը բռնեց օբաների չորս բոլորքը, սուր- սուսերով, շէկ գնդակով նա սպառնաց դուրս ելնողին:

Ի՞նչ են արել հովիւները. ինչո՞ւ բէկը սպառնում է իսպառ ջնջել նրանց ցեղը: Տասանորդը վազուց տուին. քա- նի օր էլ հիւր պահեցին. զան մորթե- ցին, իւղ ու մածոն, սեր ու կարագ,

միշտ առատ էր նրա համար: Էլ ինչո՞ւ էր բէկը վերցրել թուր ու թուանք, գէնք ու զրահ, կոխ եկել:

Բէկի մարդիկն ստից-զուխ գէն- քով պատած, եկան մտան օբէքանց մէջ: Հաւար տուին ամեն մարդի՛ բէկի հրամանը յայտնելու: Ամեն կողմից հա-ւաքուեցին հովիւները:

— Հէյ, չորաններ, — խօսեց բէկի մարդոց մէկը, — բէկը խոստանում է այսուհետև այս բոլորը՝ չայիր-չիման, լեռ ու դաշար՝ կանաչ արօտ ձեզ պար- գեկել, եթէ նրա հրամանը կրկատարէք:

— Ի՞նչ է, ի՞նչ է բէկի հրամանը, — ամեն կողմից ձայնեց ամբոխը:

— Բէկն ուզում է հովիւ Ասլանի սիրուն կնոջը՝ սարի ջէյրան, դաշտի մարալ, հիւրի-փէրի, սիրուն Ֆաթմին, եթէ չըտաք, նա ցասումը ձեր տան- տեղի, մալ ու միւլքի վրայ կըթափէ, ոչ ոք ձեզնից չի ազատուիլ նրա ձեռ- քից:

— Ամօթ, ամօթ նրա համար — գո- ոաց ամբոխը կատաղած. — շնատ, շնատ

կորէք, թէ չէ՝ մաս-մաս կ'անենք ձեզ էլ, այդպէս ասողին էլ. էլ ո՞ր օրուայ համար ենք մենք «մարդ» անունը կրում մեզ վրայ, երբ մեր պատիւ ու նամուսը բէկի նման լպիրը մարդուն պիտի ծախենք: Հէյ, եղբայրներ, մեր կանայքը մեր պատիւն են. դաշտի ծաղիկ, մեր սարի վարդ սիրուն Ֆաթման մեր քոյրըն է. ամօթ չէ՞ մեզ վախկոտ լինել, չըպաշտպանել քաջ Ասլանին: Կարիճ Ասլան, իզիթ Ասլան, մենք ամենքս, մեծ ու փոքր պատրաստ ենք միշտ արեան գնով դէմ գնելու ստոր բէկի ծառաներին. մեզ տա՛ր կռիւ:

Յանկարծ շողաց քաջ Ասլանի մերկ խանչալը, ծառաներից մէկի գըլուխը թաւաղլոր ընկաւ գետին. մընացածները փախան կորան:

Նրանք շուտով պատ կանգնեցին սարի գլխին, իրանց կանանց, մանուկներին ամբացրին նրա մէջը: Իրենք զէնքով, սուր սուսերով յարձակեցին բէկի վրայ:

1001-  
5186



Արիւնահեղ էր կռիւը. երկու կողմից քաջեր էին թաւաղլոր ընկնում գետնին: Այն ծաղիկներն ու կանաչը, որ ծածկել էին լեռան լանջը, կարմիր արնով ներկըուեցան: Մութն իջնում էր, երբ քաջ Ասլանն իւր մարդկանցով վերջին անգամ գրոհ արուեց բէկի վրայ: Բէկը սարսեց նրանց ուժից: Ձին դարձրաւ ու մազապուրծ փախաւ գնաց: Այդ իսկ ժամի վերջին գնդակ նրա գօրքից սուլաց կպաւ քաջ ասլանի անվէր կրծքին. Նա երերաց ու հառաչեց, վերջին անգամ «Ֆաթմա» կանչեց ու արնաքամ ընկաւ գետին:

Լուրը հասաւ օբաներին: Մեծ ու փոքր շրջապատած խղճուկ Ֆաթմին, լաց ու կոծով եկան, հասան արնի վայրը:

— Ֆաթմա՛ս, — խոցուած սրտից կանչեց մեր Ասլանը. — վրէժ ստոր բէկի ցեղից . . . Տղերք, Ֆաթմին ձեզ եմ յանձնում. չըտաք նրան գազան բէկին . . . Մնաք բարև . . . Ֆաթմի պատիւը ձեր նամուսն է . . . այսօր իմը, վաղը ձերը պէտք է քաշէ . . .

Այդ գայլ բէկի խոստումներին չբնա-  
ւատաք . . .

Ասաց, վերջին հայեացք ձգեց սա-  
րի լանջին, ծաղկանց միջին ջահէլ-Ղի-  
ւան, իգիթ եղբարց արնով ներկած  
գիւակներին, խոր «ա՛խ» քաշեց կըտ-  
րիճ, արի, սրտոտ Ասլանը, Փաթմի  
գրկում շունչը փչեց . . .

— Վա՛յ Ասլան, վա՛յ . . . գոշե-  
ցին կանայք ծուլատուելով:

Նրանց ձայնից ողջ սարերը գզըր-  
դացին ու խոր ձորերը ձայն տւին:  
Նրանց լաց ու կոծի ձայնը հեռո՛ւ-հե-  
ռո՛ւ մինչև ծերուկ մեծ Մուսին գը-  
նաց հասաւ: Աշխարհը մթնեց Փաթմի  
գլխին. ջահէլ-Ղիւան, իգիթ եարից նա  
գրկուեց:

— Քոյրեր, եղբարք, — դողդողջ  
ձայնով ասաց Փաթման—ինչո՞ւ կո-  
ծենք. Ասլանը մեռաւ, բայց կտակեց  
վրէժ առնել. ով չէ կարող նրա կտա-  
կը կատարել, թող նա՛ ողբայ: Ասլանի  
տեղ էս պատարաստ եմ գէնք սո՛նե-  
լու:

Այս ասելով նա վերցրաւ մեռած

եարի գէնք գրահը և այն սիրուն, դաշ-  
տի մարալ, սարի ջէյրան, չքնաղ  
Փաթման դարձաւ իգիթ, կտրիճ ար-  
դայ:

Չորի միջին փոս փորեցին, կըտ-  
րիճ Ասլանի արիւնոտ գին մէջը դրին:  
Նրա կողքին ծառ ու ծաղիկ գլուխ  
գլխի ողբում էին անժամանակ  
թողմած սէրը. փոքրիկ առուն ձայ-  
նակցում էր նրանց ողբին:

Միւս առաւօտ՝ գեռ արկը չը ծա-  
գած, բէկը վերցրաւ հարիւրաւոր ծա-  
ռաներ, ոտից ցգլուխ գէնք-գրահով,  
եկաւ պատեց օբաների շորս բողբոջը:  
Մարդ ուղարկեց հովիւների ամբողջ,  
խոստացաւ շատ մալ ու բաժին, թէ  
որ կըտան սիրուն Փաթմին:

Յեղը կատգած ոտի կանգնեց ու  
սպանեց այդ եկողին: Իրենք գէնքով  
ընկան բէկի զօրքի վրայ: Նրկու կող-  
մից շատ կտրիճներ մահացան. նրանց  
արնով ամբողջ լեռը ներկուեցաւ. ա-  
րիւնն առուի նման հոսեց սարի լան-  
ջից ծաղկանց վրայով և խառնուեց  
այն գետակին, որ քերելով քաջ Աս-

լանի սառ շիրիմը, ձորի միջով հոսում էր ցած: Ընկան բոլոր հովիւնները. ուն ու ոչխարը կոտորուեցին. սարի լանջը դիակներով ծածկուեցաւ: Յնծաց բէկը. — սչ ոք չկար, որ պաշտպանէր սիրուն Փաթմին: Բէկը պատուէր տուաւ մարդկանց՝ ողջ-ողջ բռնել, բերել մօտը: Մարդիկ՝ մէկը միւսի յետևից ընկնում էին սիրուն Փաթմի շէկ գնդակից: Բայց վերջացան գնդակները, բէկի մարդիկ հասուեհաս են: Տեսնելով որ մօտենում է ճրգնաժամը, նա վազեց մեծ սարի գագաթը բարձրացաւ և այնտեղից կանչեց բէկի ծառաներին:

— Գնացէք, ասէք զազան բէկին, որ ես միայն նրա ձեռքը կըյանձնուեմ, եթէ կըգայ:

Բէկը եկաւ, ուրախ կանգնեց սարի աակին:

— Անօրէն բէկ, — կոչեց Փաթման խիտ կատաղած — սպանեցիր ջահէլ-ջիււան հովիւներին. կտրիճ Ասլանն ընկաւ նոյնպէս նրանց հետը: նրանց արիւնը ներկեց սարի չորս բոլորը: Ե՛ս

մնացի ամբողջ ցեղիցը կենդանի. նրանք մեռան պատուիս համար, որ չթողնեն ստոր բէկին անպատուելու մեր օձախը: Այս բոլորից յետոյ կ'ուզես, որ ուրանամ ես նրանց. ջահէլ-ջիււան քաջ Ասլանին դաւաճանեմ քեզ համար, քեզ, դաւաճան, որ յղփանամ իմ մարմնով: Չէ՛, ստոր բէկ, եթէ թողնեմ դիակները, թողնեմ սրախ թոչնած եարի սառ շիրիմը, — երկինքը կայծակ կ'ուզարկէ ինձ, իմ դաւաճան սև-մուր հողուս: Ուրեմն՝ անէծք բէկի գլխին, անէծք նրա ցեղի վրայ . . . Թող քո ցեղը դայլերի պէս լեռներումը թափառէ, և յաւիտեան նրանք իրար գազանացած յօշոտեն . . .

Ասաց Փաթման, մազերն արձակ մի թռիչքով թռաւ ներքե, ուր Ասլանն էր ամփոփուած . . .

Բէկը սարսափած գետին ընկաւ և այլ ևս չկանգնեց: Նրա մարդիկը ցիրցան փախան: Շարժուեց սարը: Մեծ փոթորիկ բարձրացաւ, խլեց լեռան արնոտ կըծքից մի մեծ վէմ-ժայռ, հողով քարով ծածկեց սիրուն Փաթմի

զին, իսկ ամբողջը խորտակեց . . .

Այդ օրուանից սարի ծաղկունքը կարմրեցին, իսկ կանաչը չորացաւ. միայն ամպրոպն է ճայթում սարի գագաթին և մրրիկը ներքև՝ ձորում խելակորոյս մռնչում: Բէկի մարդիկն ընկան լեռները, ինչպէս վայրի գազաններ . . . <sup>1)</sup>

Անցան գարեր: Դեռ մնում են մեծ ամրոցի բեկորները այն մեծ սարի գագաթին. ներքև՝ ձորում Չահէլջիւան, քաջ Ասլանի, գաշտի մարալ, սարի Չէյրան, չքնաղ Փաթմի մեծ մահարձանն է անասան: Ամեն տարի հովիւները սար գնալիս ուխտ են գրնում մեծ շիրմին: Հայրը որդուն, պապը թոռին պատմում են այն անցքի մասին:

Եւ ամրոցի բեկորները անուանեցին «Հարանաբերդ»:

<sup>1)</sup> Ղարաբաղի հիւսիս արեւելեան կողմում բարձրացող լեռներում ապրում է աւազակաբարոյ թրքական մի ցեղ, որ կազմում է մի քանի զիւղեր: Այդ զիւղերը ընդհանուր անուամբ կոչւում են «Ղուրղեր» (գայեր):

## ԱՐԻՒՆՈՏ ՀՈՎԻՏԸ

(Նահաւակ բնկերոյս՝ Հ. Կ.-ի յիշատակին).

Այն, այն օրուանից այս հովաթի միջին գարուն չի բացւում: Թռչունք գեղ 'ի գեղ իրանց երգերը չեն հնչեցնում, ծառերի կանաչ սաղարթը գարնան յոգնած անցուորին չի զովացնում, գեփիււրը հեռու է փչում այնտեղից. ծաղիկներ չկան, որ իրանց բուրմունքը տարածեն հեռու. միայն գորշ փշերն են հովաթին զարգարանք և ոսկորների անկերջ շարաններ . . .

Եւ խորհրդաւոր այն սիրուն ժամին, երբ գոյն-գոյն ծաղկունք մեղմիկ գեփիււրից իրար են փարում և ողջ աշխարհի գաղանիքն ու խորհուրդն իրար հաղորդում, երբ սիրոյ դրուագ հիւսելով՝ մեղմիկ իրիկնադէմին շշտնում, բուրում, հէնց այդ իսկ ժամին խելագար մրրիկն է վազվրտում այն-

տեղ՝ այն հովտի միջին և շարժում  
անվերջ շար՝ի շար ընկած այն ոսկոր-  
ները... Ոսկորների շարք..., որոնք  
ամենքն էլ շնչում էին պարզ այն յըս-  
տակ օդը, որ այն բարձրաբերձ սարե-  
րն է պատում, որոնք ամենքն էլ  
ունին ցաւերից հիւսուած պատմու-  
թիւն . . .

Եւ մէջ գիշերին, սև մութ գիշե-  
րին, երբ փայլակ, կայծակն է երկնից  
խորքումը փայլատակում, ամպրոպի  
թափից այն լերկ ժայռերը ճայթում  
են, դողում, հէնց այդ ժամանակ  
մեղմ շուկներ են լսում հովտի  
մէջ... ցրուած դանգերն են՝ բերաննե-  
րը բաց՝ մեղմիւ պատմում են արիւ-  
նոտ հովտի հին պատմութիւնը . . .

— Մեծ էր հոշակը անյաղթ Խ-  
րանի քաջ Մահմէդ-շահի. նրա մի  
խօսքը ողջ երկրի վերայ մահ էր  
տարածում. սարսափն էր տիրում մի  
ծայրից միւսը, երբ նա սրտամտում,  
ղէմքը խաւարած լուսին էր դառնում :  
Հեռու թուրանի աւազուտներից մինչև  
Արաքսի վայրի շամբերը ու զեռ էլ հե-

ռու՝ մինչև Կովկասի ձիւնապատ սա-  
րերը համատարած մահն էր սաւառ-  
նում, երբ այդ բռնակալը անթիւ գոր-  
քերով շարժում էր տեղից :

Գարձեալ գարուն էր :

Սաղասի գիշերին լուռ էր լեռնե-  
րում և այս հովտի մէջ, ուր տարած-  
ուած էին թաւիշ խոտի մէջ նախիրն  
ու հօտը գիւղացիների: Յոգնած գեղ-  
ջուկները խաղաղ յարկի տակ մրա-  
փում էին, իսկ այն լեռների անուշ  
գեփիւրը մեղմիկ օրօր էր շնջում նը-  
րանց: Գեան էլ էր լռել, անտառը ան-  
շարժ, առուն ննջում էր խոր ձորի  
միջին. գիւղը քնած էր. նախիրը պառ-  
կած, շները արթուն լուռ գիտում  
էին: Այն «ղարաղամ»-ի միջին ճրագ  
կար. մայրն էր օրօրում լացող ման-  
կանը և օրօր երգում. և լուռ գիւղի  
մէջ, իբրև արձագանք հեռու լեռների  
վշտի ու ողբի, փոքրիկ խրճիթից մօր  
մեղմ նանիկը զեփիւրը խլում, տա-  
նում էր, թոցնում թխերի վրայ դէ-  
պի սարերը, որտեղ գիւղացին մենակ  
արխաջում, հանգիստ էր առնում . . .

Օրը լուսացաւ. գիւղ, անտառ ու գաշտը կենդանացան. գետը փրփրեց, իր մարտն սկսեց. առուն կարկաչեց, ոչխարը մայեց, և քնաթաթախ հովիւ-ւր լանջին իր «չուն» նուագեց . . .

Բայց ի՞նչ մշուշ է, որ յանկարծ պատեց ամբողջ լեռ ու գաշտ: Այդ սև մշուշը սև ամպ չէ գարնան. փոշու ամպեր են՝ բարձրացած ձիւնաց արագ դոփիւնից: Մինչդեռ գիւղացիք հրաշք կարծելով նայում են չորս դին, անյաղթ Իրանի քաջ Մահմէդ-շահը կանաչ լեռների լանջին ցած իջաւ, իսկ նրա զօրքը՝ անթիւ, անհամար պատեց ողջ գիւղի անդ ու անդաստան:

Շահը երբ դիտեց արտ ու արտօ-րայք, կանաչ այգիներ, նախիրն ու հօտը գիւղացիներէ, թոչկոտող մանկանց՝ տների կտրին, հնձուր գիւղացուն՝ մանգաղը թկին, հրաման տը-ռաւ կանչելու իր մօտ ծեր տանուտէ-րին: Եւ նա սև դէմքով, մռայլ՝ քսն ժայռը մեծ գետի ափին՝ դարձաւ ծե-րունուն:

— Ասա, ծերունի, ի՞նչն էք ամե-

նից աւելի սիրում. ի՞նչով են ապրում գիւղն ու գիւղացիք:

— Ծառադ եմ, արքայ, մեր ար-տը, կալը, այգին ու արօտ հաւասար թանկ են գիւղացու համար. եզը օգ-նական, կովը կաթնատու, գոմէշն ու ոչխար մեր ընկերներն են. իսկ այս սարերը վիթխարի կրծքով գլծոտ մօր նման կերակրում են մեզ,— ս-սաց ծերունին, խոր գլուխ տը-ռաւ:

— Տեսայ ձեր արտերը, հօտերն ու նախիրը լեռների լանջին. բայց կ'ուզենայի մի կալ էլ տեսնել. անն այն կանաչ, չհասած արտում մեծ կալ շինեցէք առանց կամների, և վազն առաւօտ թող պատրաստ լինի, ասաց շահն ու խրոխտ կանգնեց տեղիցը:

Ծերը լուռ մնաց. այն կանաչ ար-տը՝ գիւղացու յոյսը հարազատ որդու նման թանկ արժէ. ի՞նչպէս թէ քան-դել ու կալ պատրաստել: Եւ նա շը-ւարած մէկ նայեց շահին, որ խրոխտ քայլով մտաւ իր վրանը, մէկ կանաչ արտին, և արցունքը հոսեց գոտամած

աչքից . . .

Մօտ եկաւ շահի ներքինապետը և խորոխտ ասաց. «Շահը պատուիրեց՝ վազըն արևծագին կալը մաքրած ու պատրաստած լինի»:

Ծերը գլխակոր գնաց արտի մօտ, կանչեց գիւղացոց և յայանեց շահի անխիղճ հրամանը:

Երկար վիճեցին, բայց չկարողացան շահի սրտինն ու միաքը գուշակել:

Եւ որոշեցին արտի հարևան կանաչ դաշտի մէջ կալը պատրաստել:

Այդպէս էլ արին:

Ամբողջ գիշերը ծեր, երիտասարդ, կին ու երեխայ կալ պատրաստեցին:

Եւ երբ արևը արագ ու հպարտ ծագեց երկնքի մեծ ծովի միջից, ամենքին կեանք ու եռանդ ներշնչեց, շահն էլ արթնացաւ իր մռայլ քնից: Դիտեց զիմացի կանաչ արան ու դաշտ եւ տեսաւ՝ արտը անվնաս կանգնած, իսկ կալը նրա կողքին պատրաստած:

— Կանչեցէք այստեղ տասն պայտառներ, ընտրեցէք հարիւր կատաղի ձիանք:

Կատարուեց իսկոյն շահի հրամանը:

Եկան պայտառները մութ ու պայտերով, խոր գլուխ տուին շահին, կանգնեցին:

Ընտրեցին իսկոյն հարիւր նժոյգներ, հարիւրն էլ խուար՝ սևաթոյր գիշեր, կատաղի՝ ինչպէս մթնած անտառի վայրի գազաններ:

— Տեսնում էք սրանց, ցոյց տուաւ արքան կատաղի ձիանցը, կը պայտէք այնպէս, որ սուր մեխերի ծայրերը ցցուած լինին գէս գետին. մեխերի ծայրերը երբէք չծալել: Դէ՛հ գործի կացէք:

Խեղճ պայտառները մնացին շուար. իրանց կեանքի մէջ երբէք այդպիսի պայտ չէին կայցրած: Երկար խորհեցին և վերջ ՚ի վերջոյ պայտել սկըսան:

Կէսօրւայ մօտ էր. բոլոր ձիանքը պայտած, ինչպէս որ շահն էր պատուիրել:

— Ժողովէ՛ք իսկոյն բոլոր գիւղացոց, շահը պատուիրեց, — որպէս կենդանի խուրձեր թող պառկեն մեծ կալի միջին:

Իրանի զօրքը պատեց սղջ երկիրը, քշեց գիւղերից գիւղացիներին գէպի մեծ կալը, կենդանի շղթայ կազմեց չորս բոլոր:

Եւ երբ ամեն բան պատրաստ էր, ինչպէս շահն էր պատուիրել, բաց թողին յանկարծ կատաղի ձիանց կամփի փոխարէն . . .

Փռշի բարձրացաւ, աճեղ փոթորիկ. հպարտ լեռները սև ամսը պատեց և նրանց աչքից ծածկեց մեծ կալը. բայց երբ կատաղի մրրիկը փրչեց, մարդկանց մահամերձ ճիչն ու աղաղակ երկինք բարձրացաւ, զարհուրանք պատեց այն վէս լեռներին. կայծակը փայլեց, ամպրոպը ճայթեց և այն կանաչկոտ լեռներից իսկոյն արցունքը հոսեց. նրանց կրճերը ցաւից պառուռեցին և արցունքն առու կազմեց, սուղեց կանաչ արտօրայք. . .

Աղի արցունքից արտը չորացաւ, խտտը չբացաւ, ծաղիկներն իսպառ մարեցին յաւէտ . . .

Անցան շատ դարեր . . .

Նոյն սև ամպերն են լեռները պատած, նրանց աչքիցը ծածկում են «Նգիդ Խրմանի»<sup>1)</sup> դաշտը. մինչև այսօր էլ առուները կաթ-կաթ ծորում են ժայռից արցունքի նման. իսկ հովտի միջինն ո՛չ ծառ, ո՛չ ծաղիկ էլ չեն կանաչում . . . մրրիկն է խաղում նեղ հովտի միջի և օրօր երգում ցրուած գանգերին . . .

Իսկ խեղճ գիւղացին արիւնոտ հովտից հեռու է փախչում: Այնտեղ արա, արօտ էլ չեն կանաչում . . .



<sup>1)</sup> Ե գ ի դ ն ե ռ ի կ ա ը որ գտնուում է Շուշուց գէպի հրեւիս գտնուած լեռնահովիտներում:





ՀՀ Ազգային գրադարան



NL0362943

56.368

